ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները մշտադիտարկելու, գնահատելու և վեր հանված խնդիրներին արձագանքելու կառավարության կարողությունների հզորացում» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով Լոնդոն կատարած այցի վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը** - Շամամ Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը** - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները** - Լոնդոն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), 2017թ. սեպտեմբերի 11-ից 15-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը** - ԱՄՆ ՄԶԳ/Տեղահանված երեխաների և ծնողազուրկ երեխաների հիմնադրամի (DCOF) ֆինանսավորմամբ և աջակցությամբ «MEASURE Evaluation» ծրագիր

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/* - Մասնակցել «Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները մշտադիտարկելու, գնահատելու և վեր հանված խնդիրներին արձագանքելու կառավարության կարողությունների հզորացում» թեմայով աշխատաժողովին, որի նպատակն էր.

   - Խթանել համագործակցությունը մասնակից չորս երկրների՝ Հայաստանի, Գանայի, Մոլդովայի և Ուգանդայի միջև,
   - վերանայել և լրամշակել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման, հասցեականության բարձրացման և մշտադիտարկման համար մշակված (ՄԱԿ-ի ուղենիշներին համահունչ) ուսումնասիրության գործիքը և հարմարացնել այն յուրաքանչյուր երկրի համատեքստին,
   - մշակել երկրում ուսումնասիրության իրականացման պլան, որը ներառում է շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, ժամանակացույցը, դերերի բաշխումն ու պարտականությունները,
   - զարգացնել մասնակիցների տեխնիկական հմտությունները՝ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների մշտադիտարկումն ու գնահատումն իրենց երկրներում իրականացնելու համար:

6. **Քննարկված թեմաները** – Մասնակից երկրներում՝ Հայաստանում, Գանայում, Մոլդովայում և Ուգանդայում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված

երեխաների խնամքի և պաշտպանության համակարգում ընթացող բարեփոխումների, ինչպես նաև այդ գործընթացը մշտադիտարկելու, գնահատելու նոր գործիքի ծանոթացման, տեղայնացման և վերհանված խնդիրներին արձագանքելու կարողությունների հզորացման վերաբերյալ թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Օր առաջին

Աշխատաժողովի բացման և մասնակիցների ներկայացման արարողությանը հաջորդեց «MEASURE Evaluation» ծրագրի ղեկավար տիկին Մոլի Քենոնի ելույթը՝ նվիրված աշխատաժողովի հիմնական նպատակներին և ակնկալիքներին:

Նշեմ, որ մինչ աշխատաժողովը յուրաքանչյուր մասնակից երկրում արդեն իսկ ձևավորվել էր երեխաների հիմնահարցերով զբաղվող «երկրի հիմնական թիմ», որի կազմում ընդգրկվել են համապատասխան նախարարությունների, քաղաքացիական հասարակության, տվյալ երկրում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և ոլորտի այլ շահագրգիռ կողմերի 14 ներկայացուցիչներ:

Համաձայն նախապես մշակված օրակարգի՝ յուրաքանչյուր երկիր պետք է ներկայացներ «Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները» թեմայով մեկ ժամ տևողությամբ զեկույց, որը բոլոր երկրների համար ուներ միասնական կառուցվածք և ընդգրկում էր հետևյալ թեմաները.

- Երկրի հիմնական ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
- Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գլխավոր դերակատարները,
- Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների հիմնական առանձնահատկությունները՝ ըստ զարգացման փուլերի,
- Բարեփոխումների հիմնական ձեռքբերումները՝ (ինչ է արվել և ինչն է ընթացքում) ըստ հետևյալ ուղղությունների՝
    - ընտանիքից երեխայի՝ առանց անհրաժեշտության բաժանման կանխարգելում
    - խնամքը հաստատություններում
    - խնամքը խնամատար ընտանիքներում
    - ուղեկցվող անկախ ապրելակերպ
    - խնամքը հարազատների կողմից
    - որդեգրում
    - ընտանիքների վերամիավորում և միասնության ամրապնդում
- Հիմնական մարտահրավերներ և հնարավորություններ

Համաձայն օրակարգի՝ զեկույցները ներկայացվեցին հետևյալ հերթականությամբ՝ Մոլդովա, Գանա, Ուգանդա, Հայաստան:

«Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները Հայաստանում» զեկույցը, որպես երկրի հիմնական թիմի ղեկավար ներկայացրել եմ ես՝ նշելով վերը նշված ուղղություններով դեռևս 1991 թվականից մինչև օրս կատարված և կատարվելիք աշխատանքները, հիմնական ձեռքբերումները և մարտահրավերները:

Մասնավորապես, երկրի հիմնական ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ցուցանիշներին անդրադառնալուց հետո հետո մանրամասն ներկայացրեցի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի և պաշտպանության համակարգը, նրանում ներգրավված յուրաքանչյուր կառույցի (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ առողջապահության, ՀՀ արդարադատության, ՀՀ ֆինանսների նախարարություններ, ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, միջազգային և պատվիրակված հասարարական կազմակերպություններ) դերն ու խնդիրները, նրանց հիմնական գործառույթները:

Համակարգում իրականացվող բարեփոխումների համատեքստում ներկայացրեցի փուլ առ փուլ իրականացվող աշխատանքները, այդ թվում՝ երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների վերակազմակերպման ընթացքի, երեխայի մուտքը հաստատություն կանխարգելմանն ուղղված ծրագրերի, հաստատություններում խնամք ստացող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների գնահատման հիման վրա այլընտրանքային ծառայությունների, մասնավորապես՝ երեխաների և ընտանիքների աջակցության կենտրոնների, ցերեկային խնամքի և հոգեբանամանկավարժական աջակցության կենտրոնների և խնամատար ընտանիքի ինստիտուտի ընդլայնման վերաբերյալ:

Նշեցի նաև, որ չնայած կատարվող ծավալուն աշխատանքներին դեռևս առկա են նաև մի շարք հիմնախնդիրներ՝ հատկապես կապված հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքի (այլընտրանքային ծառայությունների միջոցով) կազմակերպման հարցում:

Ընդհանրացնելով բոլոր երկրների զեկույցները՝ կարելի է արձանագրել հետևյալը.

ԱՄՆ ՄԶԳ միջոցով իրականացվող բարեփոխումները բոլոր երկրներում մեծ հաջողություններ են գրանցում, սակայն կան նաև մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարվեն: Ծնողական խնամքի բացակայությունը երեխայի զարգացման համար ստեղծում է ընդհանուր բնույթի խնդիրներ, և երեխաները, ովքեր դաստիարակվում են հաստատություններում, ցանկացած տարիքում տառապում են ֆիզիկական, հոգեբանական և ճանաչողական խնդիրներով: Սա հատկապես կարևոր է մինչև երեք տարեկան երեխաների համար, քանի որ առաջին տարիները վճռորոշ են անհատի ուղեղի զարգացման համար: Ուստի, կարևոր է, որ ոչ մի երեխա, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, հնարավորինս չտեղավորվի շուրջօրյա խնամքի հաստատություններ: Սակայն, չնայած շատ երկրներում բեռնաթափման գործընթացի տպավորիչ առաջընթացին, այդ թվում՝ Հայաստանում, շատ երեխաների, հատկապես հաշմանդամություն ունեցող

երեխաների համար, հաստատություններում տեղավորումը դեռևս ընկալվում է որպես բավարար լուծում:

Քննարկումների ընթացքում հատկապես կարևորվեցին/ձևավորվեցին հետևյալ սկզբունքային մոտեցումները.

- աղքատությունը չպետք է պատճառ լինի երեխային ընտանիքից հեռացնելու համար,
- երեխան պետք է մասնակցի իր վերաբերյալ որոշումների կայացմանը,
- նույնիսկ այլընտրանքային խնամքը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը,
- ցանկացած այլընտրանքային խնամքի տեսակ պետք է լինի երկարաժամկետ՝ ապահովվի շարունակականությունը,
- պետք է պահպանվեն խնամքի նվազագույն չափորոշիչները,
- իրականացվի պարբերական մոնիթորինգ:

Մոլդովայում նույնպես գործում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ, հատկապես նշվեց իրենց երկրում որպես ամենահաջողված այլընտրանքային խնամքի ձև՝ «խնամատար ընտանիքի» կայացումն ու ընդլայնումը:

Համայնքներում իրականացվում են սոցիալական աշխատողի ազդեցության մեծացմանն ուղղված աշխատանքներ, սակայն, պայմանավորված որոշ երկրների (Գանա, Ուգանդա) բյուջեի սղությամբ՝ սոցիալական ծառայությունը իրականացվում է հիմնականում կամավորության սկզբունքով:

Ուգանդայի ներկայացուցիչները նշում էին, որ չնայած իրենց երկրում ուժեղ ընտանեկան ավանդական կապերի առկայությանը՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է հաջողված օրինակներով իրազեկել հասարակությանը, որպեսզի քաղաքացին պատրաստ լինի ընդունելու հաստատությունում գտնվող երեխային, աշխատել, որպեսզի հաստատությունից ընտանիք վերադարձած երեխա խնամող ընտանիքը ստանա աջակցություն (ցերեկային խնամք, աջակցություն ընտանիքին՝ պայմանները համապատասխանեցնել հատուկ կարիքներով երեխաների կարիքներին):

Գանայի ներկայացուցիչների համար ուսանելի էր ՀՀ կառավարություն ներկայացված իրավական ակտերի նախագծերում երեխայի մասին որոշում կայացնելիս երեխայի կարծիքը հաշվի առնելու առաջարկների վերաբերյալ ՀՀ-ի փորձը:

Աշխատաժողովի հաջորդ օրերին հիմանական աշխատանքներն ուղղված էին ՄԱԿ-ի «Երեխայի այլընտրանքային խնամքի մասին» ուղեցույցին համահունչ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման, հասցեականության բարձրացման և մշտադիտարկման գործիքի

մանրամասն ներկայացմանը, քննարկմանը, ապա այն, ըստ ոլորտների, յուրաքանչյուրն իր երկիր համատեքստին համապատասխանեցմանը:

Խմբային աշխատանքների շրջանակում մանրամասն քննարկվեցին գործիքի մաս կազմող յուրաքանչյուր ենթաոլորտի/ բաղադրիչի ցուցանիշները, որոնք էլ իրենց հերթին դասակարգված էին ըստ առկա օրենսդրական կարգավորումների, մատուցվող ծառայությունների, ռեսուրսների ՝ ինչպես մարդկային այնպես էլ ֆինանսական, մշտադիտարկման և գնահատման համակարգի առկայության: Քննարկելով այդ ցուցանիշների նպատակահարմարությունն ու ամբողջականությունը՝ յուրաքանչյուր երկիր դրանք համապատասխանեցնում էր իր երկրի համատեքստին:

Կազմակերպիչների կողմից առավել մանրամասն ներկայացվեցին նաև մշտադիտարկման և գնահատման գործընթացի մաս կազմող ցուցանիշների մշակման, տվյալների հավաքագրման և արդյուքների արդյունավետ օգտագործման գործընթացները:

Աշխատաժողվին մասնակցում էին նաև հրավիրված խոսնակ-փորձագետներ, որոնք ավելի բովանդակալից և մատչելի էին դարձնում քննարկվող նյութերը, մասնավորապես հանդես եկան Լյուսի Բաքը՝ «Հույս և տուն երեխաների համար», Ֆլորենս Մարտինը՝ «Ավելի լավ խնամքի համակարգ» և Ամանդա Գրիֆիտ «Ընտանիք յուրաքանչյուր երեխայի համար» զեկուցներով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Կազմվեց մեր երկրի՝ երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման, հասցեականության բարձրացման և մշտադիտարկման գործիքի կրառման նպատակով ուսումնասիրության իրականացման պլանը, որտեղ նախանշվեցին մշտադիտարկման և գնատման գործիքի գործնական կիրառմանն ուղղված հետագա աշխատանքները, շահագրգիռ կողմերը և իրենց պարտականությունները և ժամկետները (կցվում է):

Որոշվեցին հերթական հանդիպում-քննարկումների ժամանակացույցերը ինչպես նեղ աշխատանքային խմբով, այնպես էլ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ընդլայնված կազմով:

Որպես արդյունք կարելի է նշել նաև միջգերատեսչական աշխատանքային խմբի արդյունավետ և փոխլրացնող աշխատանքները:

9. Գործուղվողը՝ Շամամ Հարությունյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

22.09.2017թ.